

նոյնպէս Փոռէի այս գործին մէջ կան Հակասական կէտեր. տեսութիւններ եւ գաղափարներ որ ծիակողմանի դիտուած են եւ դասական կաղապարի մէջ ձուլուած: Վ. Փոռէ կը պատկանի Պէրիյօնի զըպ-րոյցին, եւ կամիմ կուտայ անսահման վարկ: «Մարդը ինքն իսկ կը դարբնէ իր ճակատագիրը» կ'ըսէ Փոռէ, Հակասակ անոր որ շատ լարծուն եւ խախուտ հոդի վրայ կառուցուած է այս հարցը: Ինձ կը թուի թէ Վ. Փոռէ չէ հետեւած Հոգեգան-ցական (métepsychique) գիտութիւններու վերջին նուաճումներուն: Խոր Հակասութիւն կայ Հետեւեալ խօսքերուն մէջ, «Ճակատագիրը քեզմէ, այսինքն խառնուածքէ կախուած ունի, խառնուածքը զուգադրութիւնն է ֆիզիքական կազմուածքի եւ նկարագրի, նկարագիրը սովորութիւններէ բաղկացած է, սովորութիւնները արդիւնք են միեւնոյն գործերու եւ միեւնոյն մտածումներու կրկնութիւններուն: Հակ' գործերուդ եւ մտածումներուդ վրայ եւ պիտի դարբնես ճակատագիրը»: Ստոր է թէ ճակատագիրը ստուածը մեծ մասամբ կախուած ունի ֆիզիքական կազմէն եւ նկարագրէն. բայց այս վերջինները աւելի ներծորային դեզմերու ազդեցութեան տակ են

քան թէ կաճքին: Ուրեմն մեր ուզած ձեւով ի գորու չենք զանո՞ք բարեփոխելու, քանի որ ժառանգականութիւնը նաեւ Հոն դեր ունի, առանց նկատի առնելու որ ճակատագրի դարբնումին մէջ ոչ միայն մեր ֆիզիքականն ու նկարագրի, այլ անոնցմէ շատ աւելի արտաքին պատճառներն են որ դեր ունին: Ինքը՝ Վ. Փոռէ կը խոստովանի գայս արգէն երբ կ'ըսէ՝ «Կեանքի մէջ յաջողելու Համար. պարագաներուն տէրը պէտք է ըլլալ...»: Իսկ եթէ պարագայ չներկայանայ, ինքնատիրութիւնը անբաւական է յաջողելու Համար: Ձեռն գիտեր թէ ինչն է՞ Վ. Փոռէ նկատի չ'ունենար անհատէ դուրս գոյութիւն ունեցող արտաքին բազմաթիւ պատճառները: Թերեւս իրաւունք ունի: Իր Համոզման եղանակները, նոյն իսկ սխալ անկիւնէ դիտուած, հաւանաբար աւելի բարիք ընեն քան թէ ստուգուած կարգ մը ճշմարտութիւնները: Բայց զիտակից եւ ճշմարտութեան սիրահար գասկարգիչ Համար, Հակասակ այս կարգի սքանչելի դրբերու գոյութեան, երջանկութեան գաղափարը ունի դեռ իր մեծ հարցականը:

Փարիզ ՏՊՔԹ ՄԻՆԵՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

== Բ Ր Ո Ն Ի Կ ==

Աղբքսանդր Աբելեանն ստացած մէկ նամակէ կ'իմանամ, խորին ցաւով, որ Գէորդ Չուբար յանկարծամահ է եղեր սրտի պայթումէ: Նոր Նախիջեւանի հին ու կարեւոր հայ գաղութէն ըզբսած ամենէն յարգելի եւ համակրելի դէմքերէն մին էր ան, վաղուց ծանօթ ու գնահատուած ամբողջ Կովկասի մէջ՝ իբր հանրային գործիչ եւ իբր զբող: 1908ին Էջմիածնի եկեղեցական ժողովին, ուր Իզմիրլեան կաթողիկոս ընտրուեցաւ եւ ուր Գէորդ Չուբար կը մասնակցէր իբր նոր Նախիջեւանի պատգամաւոր, անձամբ աննչցայ զինքը. եւ իր ջերմ ու խոհական ազգասէրի, իր ազնիւ, նրբացած ու արտաքին մարդու տիպարը, զոր

շատ սիրեցի, անմոռանալի հրապուրով մը մտքիս մէջ կենդանի մնացած է:

Ան խանդավառ տարփաւոր մըն էր դրականութեան եւ արուեստի. նոր Նախիջեւան այցելող մեր ընդոր արուեստազէտներն իր մէջ գտած են ջերմ բարեկամ մը եւ պաշտպան մը: Եւ ինքն իսկ զբազէտի սիրուն ու համեղ տաղանդ մը ունէր. զրած է բազմաթիւ նորավէպեր եւ քանի մը վէպեր, ուր երեւան կուզան պատմուածքի հակիրճ ու կենսաբոս ձեւ մը, իրապաշտ դիտողի տեսիլներ՝ յաճախ ոռմանութիկ թրթռուն գգայնութեամբ մը ողբերուած, և իրեն յատուկ ջղուտ, պարզ, հոծ ոճ մը: Այդ գրուածքներէն մաս մը հատորնե-



Գ Է Ո Ր Գ Զ Ո Ւ Բ Ա Ր

բով հրատարակուած են, ատոնցմէ եւ ունիմ իմ գրույցները, պատմութեան հատարածու, սուրբուած 1906ին Նոր Նախիջևեան, Մանիակսի Պարգիս 'գիւղական կեանքից', վեպ, 1905, Նոր Նախիջևեան:


Վերջին տարիներու ընթացքին ան հրատարակեց Նիւ Եորքի կոչնակին մէջ շատ շահեկան շարք մը հայ մեծ գերաստաններու մասին իր յիշողութեանց 'Թանկագին էջեր էին անոնք մանուսանդ զոր նստրած էր Ազամեանին, Տիկին Սիրանոյշին', ու սուտա նաև Անտիպիտին ամբողջ շարք մը պատմութեան որ զարդերէն մին կազմեցին այս հանդէսին: Ունիմ զեռ քովս իրմէ վոքրիկ պատմութեան մը եւ ընդարձակ վիպակ մը, անտիպ, որ Անտ-

իպի յաջորդ թիւերուն մէջ պիտի երեան: Իր ինծի ուզած նամակներէն զիտեմ որ ան վերջին ատենները գրած է մեծ վէպ մը, որ անտիպ կը մնայ, և զեռ ծրագրած ունէր վէպ մը, զոր մտազիր էր գրել ի մտայ, երբ մահն եկեր է իր ձեռքն ընդ միշտ կասեցնելը: Մեր ժողովորդի բնտիր մէկ գուակը, մեր ազգային կեանքի ու գրականութեան ազնիւ մէկ ծառայողն է որ կ'անհետանայ իրմով:

**

Այդ մահտան լուսին հետ գրեթէ նոյն տակն իմացայ դետասի հայ ազջկան մը մահը, որ, թէպէտ սակական տխուր զէպք մը, կ'ար-

մէ որ չիշատակեալ այս քրտնիկին մէջ, սրտ-
 ճեռեալ այդ մահոյ նետաւոր նետահանդերձըն
 մին է պատարագմի տակն հայկական տարա-
 դրոթեանց արհաւիրքին, և սրտճեռեալ
 հանդուցեալը Եզա մին այն կենդանի վիզ-
 ներէն որ այդ անարեւակ արհաւիրքէն ներ-
 շնչուած Տրապիզոնցի Սեմա սաւ վեզի նե-
 զնեակահին անտար տառմին մէջ հոգով
 թափանցել տալին: Օրիորդ շերտող: Ա-
 րապեան, որ վերջերս Լեզվէնի մէջ նուա-
 ղեցաւ, գոտարն էր վաղեմի բարեկամի՝
 Վահան Մալեղեանի քրոջ, Տիկին Մարի Ա-
 րապեանի: Ամէն անոնք որ իմն պէս 1800-ի
 շրջանին Պոլիս մտերմեակն Եզած են Մա-
 շեղեան բնամիտքին, գիտնն թէ, ինչ շնչող,
 ուրախ և ջերմ միտդորս մը կը տրեր, այդ
 տան մէջ, թէ գրականութեան համար ինչ-
 քան բառն սէր մը կ'ուզուր, Մալեղեան բն-
 տանիքի բոլոր անդամները և ինչպիսի գրա-
 վագին հազաձուլեամբ Մալեղեան բաղբեր
 կ'ընդունէին հիւրերն իրենց գրական սիրուն
 հաւաքմանց, որոնց կը մտանակցէին ժամա-
 նակին գրեթէ բոլոր հին ու նոր ծանօթ գրող-
 ներս Այդ երջանիկ ու ազնի տան միտդոր-
 տին մէջ կազմուած Մարի Մալեղեանը յետոյ
 Տրապիզոնի գաղութին ամենէն բարի ու ազ-
 գասէր անդամներէն միայն, Կայծակ Արապ-
 եանի ամուսինը կը գտնար, և հոն կը յո-
 բնէր ընտանեկան նոր ու սիրուն բայն մը որ
 ազգասիրութեան վառարան մըն էր նաև:
 Տարագրութեանց սակումն սկսելուն, այդ ամ-
 բողջ ընտանիքն ալ, որ, ինչպէս աշխարհն ու-
 բիշնէր, ցայնվայր արդար ո՛ր բարերար եր-
 շանկութեան մը մէջ ապրած էր, կը նետուէր
 յանկարծ ամենէն անարզ բարբարոսութեան
 սարսափներուն մէջ: Տրապիզոնէն քիչ հեռու,
 այլ ու կին կը բռնագատուէին գատուիլ իրենց
 հիգդ ղեռատի գաւակներէն, որոնց մին՝ հա-
 գմ մէկ տարեկան, այս վերջինը, հրէջ ձէմալ
 Ազմիի հրամանով արիչ 200ի չափ երախա-
 ներու հետ կը գրուէր հիւանդանոց, որպէս թէ
 իբր գաբմանուելու պէտք ունեցող հիւանդ, և
 հոն թուաւոր շինուկով մը գտնուք պատ-
 տաստելով կը սպաննէին ամենքն ալ մէկ
 օրուան մէջ: 20րդ աղջիկներէն մին գաբմու-
 բանքի բազմազան փուլերէն անցնելէ յետոյ
 կ'իջնար քրիստոնեայ կնոջ մը ձեռքը, որ կը
 յաջողէր գախ ծածուկ պահել տարիներով,
 միւս երեքը՝ քանի մը թուրքերու տունը



Ն Ե Ր Ա Ն Ո Յ Ե Ա Ր Մ Պ Ե Ա Ն Ե

մնայլ յետոյ՝ կը յաճմուէին Լազի մը, որ,
 բարի մարդ, և անոնց հօր վեհանձն բնաւ-
 րութեան ծանօթ, գտնուք իր տան մէջ կը
 պատասպարէր միշտև զինագաղար, թէ՛ գիմ-
 րով անոնց վրայ և թէ՛ յուսալով որ օր մը
 թերեւս անոնց հայրը կ'ապասի ու կը գտա-
 նայ Տրապիզոն և իրեն հասնուէր մը կու-
 տայ իր գտակները պահած ըլլալուն համար:
 Կայծակ Արապեան և իր ամուսինը՝ հայկա-
 կան Կազգովային ճամբան ծայրէ ծայր կրա-
 րելով կը հաննէին շաբլու, հոն, ծիրած, ու-
 ժասպառ, Արապեան քիչ յետոյ կը մեռնէր
 քղերայէ: Չիմագաղարին, Տիկին Արապեան
 և իր ամբողջ ընտանիքը՝ երկար փնտրո-
 տութեքէ յետոյ կ'իմանային աղջիկներուն
 ուր գտնուելը և որոշ նուէրի մը փոխա-
 րէն անոնք կը յաճմուէին իրենց սօր:
 Բայց այդ փոփոկ էակները, իրենց կեանքի
 ամենախարմ օրերուն յանկարծ գրախուկ մը
 դժոխք գահավիժուած, սարսափի օրերուն մէջ
 ստողջութիւններն քայքայուած, ու յետոյ շորս
 տարի իրենց ծնողքէն հեռու շարքաշ, կարծր,

անհարգատ կեանքի մը դատապարտում, աւելի եւս ազարացած, դարձած էին դիւրին որսեր այն անողորմ հիւանդութեան որ երիտասարդ ու վատուժ օրկանիզմներուն կը սպանայ: Հակառակ բոլոր խնամքներուն որ անոնց շտապուեցան, երեքն ալ յաջողաբար իրենց ծաղիկ հասակին մէջ յաճեցին ընդ-միշտ փակեցին կեանքի լոյսին: Հերանոյշ Արապեան, այն օրերուն ուր Օրիորդ Փօլ Հանրի Պորտօ կը ծրարէր իր վէպը, իր՝ ինչպէս եւ իր քոյրերուն ու իր մօր՝ այդ սարսափի, օրերէն պահած քստմնելի յիշատակներն ու տպաւորութիւնները անոր պատմող եւ գայն կենդանի տոսմին հետ դէմ դիմաց զնոյղ Հայուհիներէն մին եղաւ: Արապեան ընտանիքի ցաւագին ողիսակասին հետ կապ ունի: «Տրապիզոնցի Անթառամ» շատ մը արհաւիրալի կամ սրտաշարժ դրամագները, եւ հեղինակուեալն իրը իր վէպին հերոսուհի Տրապիզոնցի աղջիկ մ'առնելն իսկ՝ ատոր հետեւանք ըլլալ կը թուի: Ու Հերանոյշ ոչ միայն ազնուասիրտ ու տաղանդաւոր Ֆրանսուէին ներշնչած է իր տուած յուզիչ տեղեկութիւններով, այլ եւ իր անձին իսկ ֆիզիքական ու հոգեկան նուրբ, քնքուշ, մաքուր շնորհով, եթէ հեղինակուհին իր վէպին մէջ այնքան խորին գմայլանքի զոյներով յօրհնած է պատկերը Հայ Աղջկան, աստիկ մեծ չափով մը կը պարտինք երիտասարդ Հայուհի այդ հարազատ ու սիրուն նմուշին զօր իր դէմ ունեցաւ:

Հանգուցեալին մօրեղբայրը անոր ձօներ է ցաւի քերթուած մը, որ Անահիտի այս թիւին մէջ կ'երեւայ, այդ ցաւը պիտի զգան — կամ պիտի վերզգան — բոլոր Հայերը, աչք մը նետելով այդ վաղամեռիկ գողտր էակին նկարին վրայ զոր այս տողերուս հետ կը հրատարակեմ, որովհետեւ հոն պիտի տեսնեն՝ անգամ մը եւս՝ ինչպիսի ազնուական մաքրութիւն մըն էր որ անլուր վայրենութեամբ կոխտուեցաւ ամենէն ազատ ու վատողի բնութեան գարշապարին սակ:



«Տրապիզոնցի Անթառամ» վէպը, ինչպէս կը գուշակէի հոս անոր նուիրած յօդուածին մէջ, խոր տպաւորութիւն գործեց ֆրանսական հասարակութեան վրայ, փարիզեան քանի մը

կարեւոր թերթիքու մէջ (Քանտիտ, 15 հուլիսի լիւթիւրէի, Ֆիլարսօ, 1'Ամի տիւ փէօփ), եւս ինչպէս եւ յունիսալ աը իընէվ) հրեւցան անոր մասին յօդուածներ՝ ականաւոր գրողներու ստորագրութեամբ, եւ ուր հեղինակուեալն տաղանդին գնահատման կ'ընկերանային հայ ժողովուրդի համար սրտազին համակրութեան, մեծ հեղինակ հանդէպ գայրոյթի եւ այդ եղեանը կատարողներուն փաստաբան Լօթիներուն եւ ձարէրներուն դէմ բողոքի արտայայտութիւններ:

Ֆիլարսօի մէջ գրողներն էին մեծաւուն բանաստեղծ Հանրի աը Բիսեիէն եւ Լուի Պերթրան հանրածանօթ գրագէտը, երկուքն ալ ֆրանսական Ակադեմիայի ամենէն հեղինակաւոր անդամներէն: Լուի Պերթրանի ուժեղ յօդուածին թարգմանութիւնը երեւցաւ մեր արտասանման թերթերէն ոմանք մէջ, անկից կը յիշատակեմ ան հատուածը միայն. «... Այս գիրքը կարգալով, մարդ գրեթէ շարունակ հիացումէն կ'անցի գայրոյթին, հիացում երիտասարդ տաղանդի մը համար որ իր առաջին գլուխ-գործոցը կուտայ մեզի, գայրոյթի հեղինակներուն դէմ այն վայրսագութեանց, որոնց՝ այս պատմուածքը, հայիւ վիպածեւուած, զարհուրելի յայտնութիւնը մեզի կը բերէ: ... Մեծ ուրախութեամբ է որ կ'ողջունեմ այս փայլուն յաջողութիւնը, ասիկա լիալիւր փթթումն է վիպասանի ճոխ խառնուածքի մը, ուժգնապէս ինքնատիպ, գրեթէ առնական՝ մտածման գօրութեամբ եւ շարադրութեան կարգաւորութեամբ: Հող կը կը գտնենք առաջնակարգ ձիւրքեր, վիպողի ե դրագէտի ձիւրքեր: ... Ինչ որ իսկոյն սիրելի եղաւ, ինծի հոտ, այն իրեքն է զոր հեղինակը կը բռնէ գրքին սկիզբէն իսկ, իբր ճշմարիտ քրիստոնեայ, իրը ճշմարիտ ձրանսացի, Տիւկին Փօլ Հանրի-Պորտօ մէջ հարուածով մէկզի կը նետէ այն շողորդ թրքասիրութիւնը, զոր Լոթիի մը թեթեւ ուղեղը ա'յնքան նպատեց մեր մէջ «մտա» դարձրելու, եւ որով ամէն ձրանսացի՝ որ բոլորովին ապուշ չէ՝ պէտք էր կարելէր, այն անագին վարմունքներէն յետոյ զոր թուրքերն ունեցան մերիներուն հանդէպ եւ զոր դեռ ցոյց կուտան մեզի: Եւ ան անձնատուր չ'ըլլար նաև տեղական զոյնի՝ հինցած քուրջին, ոչ ալ արեւիկան «միրաժ»ին, ինչ որ գինքը չ'արդիւր կովկասեան շրջանու կամ անապատներու քոպատկերներու

գեղեցկութեան զգայուն մնալէ եւ գանոնք իրենց բովանդակ շքեղութեան մէջ նկարելէ: Բայց ան սրտանց այնտեղի այն հոգիներուն հետ է որ մեզի ամենէն աւելի եղբայրական են, կամ գէթ անոնց հետ զոր աւանդութեանց ու մշակոյթի խնամութիւն մը ամենէն աւելի մեզի կը մտացնէ:»

Տարօրինակն այն է որ մեր մամուլին մէջ այդ վկային վրայ ու է յօդուած չերեւցաւ՝ Ալալուպտի եւ Անախիտի մէջ իմ հրատարակածներէս գատ, միայն՝ հոս ու հոն անստորագիր տարտամ երկտողներ: Հեղինակուհին խնդրած էր որ իրեն համար պահեմ հայ թերթերու մէջ երևալիք յօդուածները: Ամօթով մնացի իր քով: Ինք իր գիրքը՝ ձօնեղով՝ զըրկած էր մեր բոլոր թերթերու տնօրէններուն կամ ղլխաւոր աշխատակիցներուն, հազիւ մէկ քանիէն հակիրճ նամակ մը ստացած է: Իրեն սրտայոյզ ու սիրուն նամակներ ուղղած են քանի մը հայ ընթերցողներ, անձանօթ մարդիկ. ոչ մէկ ծանօթ հայ մտաւորական խորհած է հեղինակուհույն մտքի ու սրտի այդ ազնիւ ճիգին վրայ իր զգացումները յայտնող նամակ մը գրել իրեն: Երբ Լօթի ու Ծարէր կը գրադարտէին ու կ'անսպառէին մեր ժողովուրդը, մեր մամուլը լի էր անոնց մասին հայտնաբերելու պարտանկող յօդուածներով, ինչ որ բնական էր, եւ նոյն իսկ շատեր Լօթիին կը գրէին նախատական նամակներ՝ ամէն շաբէ եւ սահմանէ անդին անցնելով, հիմայ մեր դէմն ունինք Լօթիի սրկած թոյնին զեղիթափը բերող գործ մը եւ զայն արտագրող վեհոգի զբազիտուհի մը, ու լուռ կը մնանք ... Ասիկա անընկալն է ու ցաւալի:

Մեր գրականութեան այժմեան համապատկերին վրայ տեսութեանս վերջին մասը — որ բաւական ընդարձակ է — պիտի հրատարակեմ Անախիտի յաջորդ թիւին մէջ, տեղ մնացած չըլլալով ներկայ թիւին մէջ անոր համար: Հոս կ'ուզեմ յիշատակել միայն կարեւոր գրական հին էջերու վերհրատարակման երկու ճիգ, որ վերջերս երեւան եկան եւ ուշաբար ու նշանակալից են տարբեր տեսակէտներով: Մի՛ն՝ Աւետիք Իսահակեանի «Բանաստեղծութեանց» հատորին երկրորդ տպագրութիւնն է՝ Խ, Հայաստանի Պետհրատին խնամ-

քով, միւսը՝ Ռուբէն Չարդարեանի ամբողջական հործերու առաջին հատորին երեսու մե է՝ «Նահապետի գրողներու բարեկամներ» խմբակցութեան խնամքով:

Չարդարեանի գրական արտադրութեանց վերհրատարակումը ամենէն զովելի գործերէն մէկն է որ կատարուած ըլլան վերջերս: Այս հատորը կը յաջորդէ իվկատինցիի գործերուն գրեթէ ամբողջութիւնը պարտանկող ստուար հատորին զոր Խմբակը բազմապատակ վարպետին աշակերտները քանի մը տարի առաջ հրատարակեցին Պոսթընի մէջ: Նոր գործադրութիւն մըն է այն պարտականութեան զոր ունինք մեծ եղեւնին զոհ գացած մեր գրագէտներուն եւ բանաստեղծներուն տպուած ու անտպ գործերն ամբողջական հաւաքածուներով հրատարակելու, պարտականութիւն որուն կատարման համար առաջին կը ըլլէ կ'ուղղի տարիներ առաջ Փարիզ Յարգող Միութեան նախաձեռնութեամբ սարքուած «Հայ Մշակոյթի» հանդէսի մը մէջ: Անոնք որ ի լոյս ընծայած են Չարդարեանի հատորը, մտադիր են, ինչպէս յայտնեցին իրենց շրջաբանով, հետզհետէ հրատարակել նաեւ գործերն ուրիշ նահատակ գրողներու, որոնց յիշատակուած շքեքին մէջ գրականութիւնը տեսչայ որ Սիսիանի, Չօհրապ, Ճիւրան Յրաքեան ու Վարուժան մտոցուած են: Հաւ ըրած են Չարդարեանի բոլոր գրուածքները մէկ հատորի մէջ ամփոփելու տեղ՝ երեք հատորով զանոնք հրատարակել որոշելով. իվկատինցիի եւ Խիբեանի մեծագուտուած հատորները՝ պատկանելի ու կոթողական զբքեր են, բայց թանկաթէք, որով արդէն իսկ գիրք գնել չսիրող մեր ժողովուրդին մէջ քիչ տարածուելու սահմանուած: Չարդարեանի առաջին հատորին մէջ կը գտնենք համախմբումը՝ իր «Նէքեթները» եւ «արձակ էջերը» լաւազդին էր ըսել՝ «առաջակ քերթուածները»՝, եւ անոր գին դրուած է 2) Ֆրանք, որ թերեւս նորէն քիչ մը սուղ է, աղքատիկ քանակներուն, որոնք գրքի համար ամենէն շուտ ու սիրով բացուողներն են՝ դժուար համատեղելի: Մտաւորականներու խմբակը որ այս նախաձեռնութիւնն առած է, կը բաղկանայ՝ ինչպէս արդէն գիտել տուի Անախիտի նախորդ թիւին մէջ, միմիայն դաշնակցական զրոյցներէ, եւ անոնցմէ սմանք գուտ գրականութեան հետ բաւական համեստ կապ մը ունին:

Հաւաքական այսպիսի ձեռնարկ մը, որ ունի լոկ գրական նկարագիր եւ բովանդակ Հայաստանի համար յարգելի ու սիրելի եղող նահատակ մեծ գրագէտներու գործին յաւերժացման նուիրուած է, պէտք էր դեկամպորուէր ակելի լայն ու անխտրական ըմբռնումով կազմուած խումբէ մը: Այս առաջին հատորին տպագրութիւնը սիրուն է, լի Մ. Քէպպայճեանի նկարը՝ խաշի ճամբան խորհրդապատկերով՝ որ կը զարդարէ գրքին կողքը, հրաշալի է՛, բայց հաւաքածուին կազմութիւնը և խմբագրութիւնը եղած են անխնայ ու հապճեպ կերպով: Հատորին սկիզբը դրուած կենսագրական ու քննական յոռաշարանը նիհար է և հարեւանցի. Զարդարեանի կտորները դասաւորուած են առանց ժամանակագրական կարգին հետեւելու, ոչ մէկուն առաջին հրատարակման տեղն ու թրուակներն նշանակուած է, այդ գրուածքներէն ոչ մէկուն մասին ո և է ծանօթագրութիւն կը գտնենք հատորին վերջը. կան տպագրական կարեւոր սխալներ: Հրատարակիչ խումբը կը ծանուցանէ նոյն հատորին վերջը դրուած յատարարութեան մը մէջ թէ ի մօտը պիտի ի լոյս ընծայէ հաւաքածուն շրմանի (Մ. Կերեցեանի) Պանդուխտի նամակներուն, որ 1885-91-ի շրջանին Պոլսոյ Հայրենիքին ու Մատիսին ամենէն սիրուն, կենսքոտ, հայաստանաբոյր էջերէն եղան. կը մաղթեմ որ այդ հրատարակութիւնը ակելի խնամօտ և լիակատար ձեւով ի հանդէս գայ: Ինչ ալ ըլլան այս առաջին հատորին թերութիւնները, այդ նախաձեռնութիւնն արժանի է ամենամեծ գնահատման ու քաջալերման: Ռուբին Զարդարեանի գրական գործին ամբողջութիւնը անհրաժեշտ էր տալ քանի մը հատորով մեր ժողովուրդին, ոչ միայն որովհետեւ նահատակ գրող մըն է ան, այլ որովհետեւ մեր ժամանակակից գրականութեան մեծագոյն վարպետներէն մին է, հմայիչ բանաստեղծ մը արձակով, տարօրինապէս ինքնատիպ, բարդ ու խոր գեղեցկութեամբ մը մշտաշող: Պէտք է յայտ առաջին հատորը արագ ու ամենալայն տարածում ունենայ. ան գրական խնջոյք մըն է՝ գեղեցիկը վայելելու կարող և և է Հայոց համար, եւ այդ հատորը չունենալը խեղճութիւն է, դժբաղդութիւն է: Տասնհինգ տարի է որ կտորուեցան՝ անաւոր պայմաններու մէջ՝ թղկատիցին, Զարդարեանը եւ միւսները, ու անա վերջապէս կը սկսինք կատարել ըստ

պարտականութիւնը անոնց հանդէպ, ոչ թէ ճտեղծով, այլ գործով: Ասիկա ուրախատիթ երեւոյթ է որ ներկայ լողվէ մեր արտասահմանեան կենսքի կարգ մը տխուր ու սոսկալի կողմերէն պահ մը կը մխիթարէ մեզ:

Աւելի եւ ուշագրաւ, նշանակալից ու գովելի երեւոյթ մըն է Նորէ, Հայաստանի Պետական Հրատարակչութեան վերջերս ցոյց տուած յարաճուն շահագրգռութիւնը եւ հոգածութիւնը զուտ գրական գործերու հետգնտէ ակելի ստուար թրով հրատարակման, եւ նկատելի ու մասնաւորապէս գովելի է որ Պետհրատը իր ի լոյս ընծայած գործերու շարքին մէջ կը սկսի նաեւ մտցնել արտագրութիւններ որ համայնավար ոգի չունին, բայց գրական մշտատեւ արժէքով գործեր են, և արտագրութիւններ են հեղինակներու որ, առանց մարքսիսթներ ըլլալու, Նորէ, Հայաստանի բարեկամներ են, կամ պարզապէս դասական գարձած հանգուցեալ մեծ գրագէտներ են, որոնց գործին պէտք է ծանօթ դառնայ Հայաստանի նոր սերունդը իր ցեղին անցեալ գրականութիւնը ճանչնալու համար, այսպէս՝ Պետհրատը սկսաւ ի լոյս ընծայել Շիրվանզադէի ամբողջ գործերու երկրորդ տպագրութիւն մը, հրատարակեց Իսահակեանի «Երկերի ժողովածու»ի առաջին հատորը, ԲԱՆԱՍՏԻՊԹՈՒԹԻՆՆԵՐԸ, եւ որոշած է ի մօտը հրատարակել Պարոնեանի ամբողջ գործերու նոր տպագրութիւն մը, Նար-Ռոսի գործերու երկրորդ տպագրութիւն մը, ինչպէս եւ թրքահայ բանաստեղծներու «Անթոլոգիա» մը գոր յօրինած են Ալապան եւ Նորնից: Իսահակեանի հատորին մէջ, որուն վերջը գրուած է Գ. Վահանդեցիի մէջ շահեկան ուսումնասիրութիւնը, ամփոփուած են իր ելզեր ու վէրքեր եւ Հայրենի աղբիւրից նախկին հատորներու տաղերուն ու քերթուածներուն մեծ մասը: Այդ հրատարակութիւնը իր արտաքինով շատ սիրուն է և Պետհրատին պատուարեր. թրուղբը, տառերը, տպագրութիւնը, ամէն ինչ նուրբ է, եւ ընտիր: Կողքը զարդարուած է Մարտիրոս Սարեանի մէջ գունատիպ գմայլելի Հայաստանեան բնանկարով, եւ գրքին մէջ դրուած են հեղինակին երկու կենդանագիրները, մին թերլմէմէգեանի, միւսը Մ. Սարեանի ձեռքով յօրինուած, եւ որ երկուքն ալ հոյակապօրէն յաշող են: Իսկ թէ ի՞նչ անգին քնարերգակ է Իսահակեան, չկայ նրբաճաշակ Հայ մը որ

չգիտնայ զայդ: Բասհակեանի ոտանաւորը, ինչպէս Չարդարեանի արձակը, անթառամ գեղեցկութիւն մը ունի, ներքին անշէջ լոյս մը, հոգեկան մշտաթարմ տպւտ մը, եւ հայրենի հողէ բուսած ծաղիկներու անոնց բոյր մը, որ զանոնք կը դարձընեն մեր ցեղին համար մտաւոր յաւերժական վայելքի առարկաներ: Հոս՝ այդ երկու վարպետներու գործին մասնաւորապէս վերլուծումը, անոնց որոշ յատկութեանց աղբիւրներուն ու կազմաւորման ցուցադրումը, անոնց տաղանդին որակումը, մեկնութիւնը կատարելու կարելիութիւնը չունին՝ այս արագ քրտնիկին մէջ. ասիկա հաճելի աշխատանք մըն է զոր ուրիշ ատենի կը վերապահեմ, լաւազոյն ու լիախիբ կերպով արտայայտելու համար մտածուեմ հայ խօսքի այդ երկու փափուկ ու ազնուական արուեստագէտներուն մասին: Հոս ուղեցի միայն՝ մատնանիշ ընել այդ երկու դրախտահամ գրքերը որ կը դրուին այս բազէիս մեր հասարակութեան առջեւ, եւ որոնց համար Հայ գերթութեան Յիսուսը պիտի սիրով ըսէր անշուշտ՝ «Առէք, կերէք, սա իմ մարմինն է»:

Ա. 20ԳԱՆԵԱՄ

Յ. Գ.— Փրոնիկս վերջացնելու պահուս, կը ստանամ իմ սիրելի բարեկամէս, Կարէն Միքայէլեանէն, որ վերջերս Հայաստան գնաց եւ երկու ամիս մնաց հոն, խանդավառ անակ մը, սրտապնդիչ տեղեկութիւններով լի, եւ զոր հաճոյքով կը հրատարակեմ հոս:

«Հայաստանն այս անգամ ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն թողցեց, աւելի քան երբ եւ է: Երեք տարի է չէի եղել այնտեղ: Կատարումս հսկայական շինարարութիւնը ինձ ուղղակի ապշեցրեց: Նախ՝ Երեւանը մի անճանաչելի քաղաք է դառել: Մի քանի տարի եւս, եւ նա կը դառնայ եւրոպական իմաստով մի կոկիկ քաղաք: Ինը հատ բարձրագոյն զպրոց կայ. մեծ քանակութեամբ մտաւորականութիւն, ուսանողութիւն: Հանրային Գրադարանը արդէն 7(Ո), (X) զիրք ունի, եւ բոնուս է իր գրքերի քանակով առաջին տեղը Անգլո-կովկասի մէջ. իսկ թանգարանը, իր նկարներէ արժէքով, կրօ տեղը ամբողջ Միութեան մէջ եւ առաջին տեղը Անգլոկովկասում: Զորպեանն ու Քանաքեռի հիդրոէլեկտրական

յական տպաւորութիւնն են թողնում, ոտոզման համար հանգին աշխատանքներ են թափաւ: Երեւան եւ եւ շինում են բազմութիւ գործարաններ: Լեւինականի աէքստրիլը, իր 5—(3000) բանուորներով, որ 9(0) առ 1(0) որբեր են, արդէն խոշոր ինուուսորիա է: Գոտուած են պղնձի նոր հանքեր, որից յետոյ Հայաստանը իր պղնձի հանածոյով կը բռնի առաջին տեղը Միութեան մէջ: Պեմզան եւ տուֆը, ինչպէս եւ մարմարիտը, խոշոր արդիւնաբերական միւստրներն են:

«Մեծ բաւականութիւն պատճառեցին ինձ այն շէնքերը որոնք շինուած են մեր արտասահմանեան հայ գաղութների միջոցներով եւ որոնց ծրագրմանը որոշ մասնակցութիւն ունեցաւ անց պատուիրակութիւնը որի անդամներից մէկն էի ես:

«Այսպէս՝ Երեւանի լաւազոյն շէնքերից են «Ամերիկահայ Տունը», ուր ապրում են մեր գրականագէտներն ու արուեստագէտները, կարծեմ մոտ 8(0) բնակարան», «Մարի Լուպարի ակաբուժական Կլինիկան», որից ամէն օր օգուտու են հարիւրաւոր երթեւեկ հիւանդներ եւ գիշերօթիկներ, «Իարուհի Յակոբեան»ի անուան հիւանդանոցը: Գեղեցիկ շինութիւններ են «Դպրոցատէր Տիկնանց» դպրոցական շէնքը եւ «Մարկոսեան հաստատութիւնը»:

«Մասնագէտների եւ մտաւորականների մէջ կան բառիս բուն իմաստով իրենց գործին նուիրում ֆանատիկոսներ: Ամէն մարդ գիտէ թէ ի՞նչ է արուս եւ ինչի՞ համար է աշխատում: Արդէն մշակուած է մի նոր նկարագիր Հայաստանի քաղաքացու, որ ունի իր տեսակէտը, կամքը եւ վերաբերմունքը դէպ է իր հայրենիքը: Եւ այնտեղ կատարուող աշխատանքները:

«Ինձ թւում է թէ այսպիսի մի վերելք մեր երկրի համար, այսքան կարճ ժամանամիջոցում, աննախընթաց է: Անշուշտ սա հետեւեանք է եւ գումարների այն հսկայական հոսանքին որ իր սկիզբն է անում Մոսկուայից: Հայաստանը այդպիսի գումարներ երբեք չի երագել: Այս տարի Հայաստանում ծախուել է մօտ 6(5) միլիոն ռուբլի շինարարութեան վրայ...:

«Մակաբ... այս ամենքը տեսնելով մի բան եւ մտածում՝ Որքան քիչ է այս, համեմատած այն ամենի հետ, որ արել է Ռորհոլային իշխանութիւնը եւ որքան շատ բան կարող